



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգաղ թիվ 18550/13)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

6 դեկտեմբերի 2018թ.

*Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական
փոփոխությունների:*

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Կոմիտեի հետեյալ կազմով՝

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković]՝ Նախագահ, Քրշիշթոֆ Վոյտիչեկ
[Krzysztof Wojtyczek], Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan]՝ դատավորներ,

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ Բաժանմունքի քարտուղար,

2018 թվականի նոյեմբերի 13-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ
հոդվածի համաձայն Հայաստանի երկու քաղաքացիներ պրն Արամ
Մարտիրոսյանի եւ Արթուր Մարտիրոսյանի (դիմումատուներ) կողմից ընդդեմ
Հայաստանի Հանրապետության՝ 2013 թվականի մարտի 4-ին Դատարան
ներկայացված գանգատի (թիվ 18550/13) հիման վրա:

2. Դիմումատուներին ներկայացրել է Երեսնամ գործող իրավաբան պրն
Լ. Սիմոնյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը
(Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական
դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր
ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2017 թվականի փետրվարի 24-ին Կառավարությունը ծանուցվել է
դիմումատուների՝ իրենց դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու
հնարավորություն չունենալու վերաբերյալ բողոքի մասին: Գանգատը մնացած
մասով հայտարարվել է անընդունելի՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 54-
րդ կանոնի 3-րդ կետի:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուները ծնվել են, համապատասխանաբար, 1966 թվականին եւ 1975 թվականին եւ ներկայումս կալանավորված են «Սեւան» քրեակատարողական հիմնարկում: Նրանք եղբայրներ են եւ մինչեւ իրենց դատապարտումը եւ ազատազրկումն ապրել եւ իրենց բիզնես-գործունեությունը վարել են Գավառ քաղաքում:

5. 2009 թվականի նոյեմբերի 5-ին Գավառի բնակիչ Հ.Հ.-ն ոստիկանությանը հաղորդել է, որ երեկոյան՝ մոտավորապես ժամը 18:20-ին, Գավառի փողոցներից մեկում սեւ սպորտային ամենագնաց (SUV) մեքենայից ինչ-որ մեկը կրակել է իր մեքենայի վրա, որի հետեւանքով նրա որդին՝ Հ.-ն, եւ նրա ընկերը (ով նրա հետ է եղել մեքենայի մեջ) ստացել են հրազենային վնասվածքներ, եւ նրանց տարել են հիվանդանոց:

6. Նույն օրը Գավառի քննչական վարչությունը սպանության փորձ կատարելու եւ ապօրինի կերպով զենք պահելու (կրելու) առիթով հարուցել է քրեական գործով վարույթ:

7. Քննության ընթացքում հարցաքննվել են մի շարք մարդիկ, այդ թվում՝ ականատեսներ եւ ոստիկանության ծառայողներ: Պարզվել է, որ 2009 թվականի նոյեմբերի 5-ին՝ մոտավորապես ժամը 13:00-ին, դիմումատուները եւ նրանց ընկեր Հ.Պ.-ն ծեծի են ենթարկել Հ.Հ.-ի փեսա Վ.Մ.-ին: Ավելի ուշ՝ այդ օրը, տեղի է ունեցել կրակոցը: Հետագայում դիմումատուներն անհետ կորել են, իսկ Հ.Պ.-ն հեռացել է երկրից:

8. Հարցաքննության ժամանակ Հ.Հ.-ն, ում վարույթի ընթացքում տրվել էր տուժողի կարգավիճակ, inter alia (ի թիվս այլնի), հայտնել է, որ իր մեքենայի վրա կրակել է սեւ սպորտային ինքնագնացով երթելակող ինչ-որ մեկը: Ինքն առաջին

դիմումատուին տեսել է մեքենայի մեջ: Երբ մեքենան հեռացել է, նա ճանաչել է, որ այդ մեքենան երկրորդ դիմումատուի մեքենան է:

9. Ա.Ս.-ն, ով դիմումատուների ընտանիքին մտերիմ անձ է եւ աշխատում է նրանց մոտ՝ նրանց բիզնեսներից մեկում, հարցաքննության ժամանակ հայտնել է, որ նշված դեպքերի օրը՝ կրակոցից քիչ անց, նա հանդիպել է դիմումատուներին եւ Հ.Պ.-ին եւ նրանց խոսակցություններից հասկացել է, որ նրանք կրակել են Հ.Հ.-ի մեքենայի վրա:

10. Դիմումատուների բարեկամ Ս.Գ.-ն հարցաքննության ժամանակ հայտնել է, որ նշված դեպքերի օրը երկրորդ դիմումատուն զանգահարել է իրեն՝ դեպքի մասին տեղեկանալու համար: Մասնավորապես, նա փորձել է պարզել, թե ով է եղել Հ.Հ.-ի մեքենայի ներսում, եւ կոնկրետ ինչ է պատահել նրան: Ավելի ուշ իր որդին տեղեկացրել է իրեն, որ դեպքի վայրում հավաքված մարդիկ ասել են, որ դիմումատուները կրակել են Հ.Հ.-ի մեքենայի վրա: Այնուհետեւ ինքը զրուցել է երկրորդ դիմումատուի հետ եւ փորձել է նրանից ստանալ ավելի կոնկրետ տեղեկություններ: Նա ոչինչ չի ժխտել, ուստի պարզ է դարձել, որ դիմումատուներն են կատարել հանցագործությունը:

11. Գավառի քաղաքապետի ընկեր Մ.Մ.-ն, ով դիմումատուների բարեկամն է, հարցաքննության ժամանակ հայտնել է, որ նա իր մեքենան տվել է քաղաքապետին (ով ենթադրաբար օգնել է դիմումատուներին հեռանալ քաղաքից): Ավելի ուշ փողոցում հավաքված մարդկանցից նա լսել է, որ դիմումատուները կրակել են Հ.Հ.-ի մեքենայի վրա եւ փախուստի դիմել: Նա հաջորդ օրն առավոտյան գտել է իր մեքենան՝ ամբողջությամբ ցեխով ծածկված:

12. Ինչ-որ պահի հարցաքննվել է առաջին դիմումատուի ընկեր Ս.Կ.-ն: Նա հայտնել է, *inter alia*, որ 2009 թվականի նոյեմբերին առաջին դիմումատուն զանգահարել է իրեն եւ հարցրել, թե արդյոք նա կարող է մի երկու օրով մի քանի հյուր ընդունել Երեւանում գտնվող իր դատարկ բնակարանում: Նույն օրը ինքը հանդիպել է առաջին դիմումատուին եւ նրան տվել իր բնակարանի բանալին:

Հաջորդ օրն ինքը գնացել է բնակարան, որտեղ տեսել է առաջին դիմումատուին եւ երկու այլ տղամարդկանց, ում ինքը չէր ճանաչում: Մի քանի օր անց ինքը որոշել է եւս մեկ անգամ այցելել առաջին դիմումատուին եւ նրա հյուրերին, սակայն նրանք արդեն հեռացել էին: Նա նշել է, որ հստակ չգիտեր, թե ինչու էին առաջին դիմումատուն եւ նրա ընկերներն այցելել Երեւան եւ ինչու էին մնում իր բնակարանում:

13. 2009 թվականի նոյեմբերի 10-ին խուլիգանության փաստի առթիվ հարուցվել են մի շարք նոր վարույթներ: Դիմումատուներին եւ Հ.Պ.-ին առաջադրվել է մեղադրանք՝ ծանրացնող հանգամանքներով կատարված խուլիգանության համար, եւ կայացվել է նրանց ձերբակալելու մասին որոշում:

14. 2009 թվականի դեկտեմբերի 9-ին Հ.Պ.-ն ձերբակալվել է: Նա նաեւ մեղադրվել է պետական սահմանն ապօրինի հատելու մեջ:

15. Ըստ երեւոյթին, Հ.Պ.-ն ընդունել է մեղադրանքները: Հարցաքննության ժամանակ նա հայտնել է, *inter alia*, որ 2009 թվականի նոյեմբերի 5-ին Վ.Մ.-ի հետ տեղի ունեցած միջադեպից հետո դիմումատուներն իրեն տվել են տարբեր տեսակի զենքեր, որոնք ինքը դրել է երկրորդ դիմումատուի սպորտային ամենագնացի մեջ: Դիմումատուների հետ մեքենայով երթուկելիս իրենք փողոցում նկատել են Հ.Հ.-ի մեքենան, որը շրջվել է իրենց ուղղությամբ եւ սկսել հետել իրենց: Այնուհետեւ իրենք տեսել են, որ Հ.Հ.-ն զինված է: Առաջին դիմումատուն բղավել է, որ կրակեն, ինչը Հ.Պ.-ն արել է հետեւի նստատեղից, որտեղ ինքը նստած էր: Այնուհետեւ դիմումատուները եւս կրակել են իրենց զենքերից: Կրակոցները տեսել են մոտ 20 վայրկյան, որից հետո երկրորդ դիմումատուն մեքենան վարել է Գավառի կենտրոնի ուղղությամբ: Մի քանի վայրկյան անց նրանք իրենց հետեւում լսել են կրակոց:

16. 2010 թվականի ապրիլի 9-ին Հ.Պ.-ի մասով վարույթն առանձնացվել է հիմնական վարույթից: 2010 թվականի մայիսի 11-ին Գեղարքունիքի մարզային

դատարանը դատապարտել է Հ.Պ.-ին ըստ մեղադրանքի, եւ նրա նկատմամբ նշանակվել է ազատազրկման ձեռով պատիժ:

17. 2010 թվականի մայիսի 5-ին վարույթը կասեցվել է այն հիմքով, որ սպանության փորձ կատարած անձի ինքնությունը հայտնի չի եղել, իսկ ինչ վերաբերում է խուլիգանության դեպքին, ապա մեղադրյալը թաքնվել է:

18. 2010 թվականի հունիսի 15-ին դիմումատուները հանձնվել են ոստիկանություն, եւ հիմնական վարույթը վերսկսվել է: Այդ օրը՝ իրենց հարցաքննությունների ժամանակ, դիմումատուները հրաժարվել են պատասխանել հարցերի մեծ մասին եւ իրենց մեղավոր չեն ճանաչել:

19. 2010 թվականի համապատասխանաբար հունիսի 18-ին եւ 21-ին տեղի ունեցած հարցաքննությունների ժամանակ դիմումատուներն իրենց մեղավոր չեն ճանաչել եւ հերքել են իրենց մասնակցությունն այն հանցագործություններին, որոնց կապակցությամբ նրանք հարցաքննվում էին:

20. 2010 թվականի սեպտեմբերի 3-ին խուլիգանության մասով վարույթն առանձնացվել է հիմնական վարույթից եւ ուղարկվել դատարան:

21. 2010 թվականի սեպտեմբերի 7-ին սպանության փորձի մասով հիմնական վարույթը եւս մեկ անգամ կասեցվել է՝ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը հայտնի չլինելու հիմքով:

22. 2010 թվականի հոկտեմբերի 26-ի վճռով Մարզային դատարանը դիմումատուներին մեղավոր է ճանաչել խուլիգանության մեջ: Նրանց նկատմամբ նշանակվել է ազատազրկման ձեռով պատիժ, եւ նրանք ազատ են արձակվել:

23. 2011 թվականի մարտի 4-ին վարույթը վերսկսվել է, եւ գործը հանձնվել է Հատուկ քննչական ծառայությանը:

24. 2011 թվականի մարտի 14-ին դիմումատուները կալանավորվել են, եւ նրանց դեմ մեղադրանք է առաջադրվել մի խումբ անձանց հետ երկու եւ ավելի անձանց սպանության փորձ կատարելու եւ ապօրինի զենք կրելու համար:

Դիմումատուների իրավունքները բացատրվել են նրանց, եւ նրանք օգտվել են պաշտպանի կողմից ներկայացված լինելու իրենց իրավունքից:

25. 2011 թվականի մարտի 16-ին Հ.Պ.-ին մեղադրանք է առաջադրվել նույն հանցանքների համար, ինչ դիմումատուների դեպքում:

26. 2011 թվականի համապատասխանաբար ապրիլի 18-ին եւ մայիսի 3-ին դիմումատուները հարցաքննվել են, սակայն նրանք հրաժարվել են պատասխանել որեւէ հարցի:

27. Ըստ Կառավարության՝ 2011 թվականի մայիսի 18-ին տեղի է ունեցել առերեսում առաջին դիմումատուի եւ Հ.Հ.-ի միջեւ, ով պնդել է իր նախկին ցուցմունքները: Առերեսման ժամանակ առաջին դիմումատուն պնդել է իր անմեղությունը եւ օգտվել է Հ.Հ.-ին հարցեր տալու իր իրավունքից, ով տվել է իր մեղավորությունը հաստատող պատասխաններ: Նույն օրը տեղի է ունեցել առերեսում երկրորդ դիմումատուի եւ Հ.Հ.-ի միջեւ, որը նորից պնդել է իր նախկին ցուցմունքները: Այնուամենայնիվ, երկրորդ դիմումատուն հրաժարվել է պատասխանել Հ.Հ.-ի հարցերին, եւ նրան որեւէ հարց չի տվել:

28. 2011 թվականի մայիսի 19-ին դիմումատուները նորից հարցաքննվել են ենթադրյալ սպանության փորձի կապակցությամբ, սակայն նրանք հրաժարվել են պատասխանել հարցերին եւ պնդել են իրենց անմեղությունը:

29. Ըստ Կառավարության՝ նախաքննության վերջում դիմումատուները եւ նրանց ներկայացուցիչները ծանոթացել են քրեական գործի նյութերին: 2011 թվականի հունիսի 16-ին դիմումատուի ներկայացուցիչները միջնորդություն են ներկայացրել քննիչին՝ պահանջելով, *inter alia*, իրականացնել առերեսում դիմումատուների, Ա.Ս.-ի եւ Հ.Պ.-ի միջեւ: Այդ միջնորդությունը մերժվել է քննիչի կողմից՝ անհիմն լինելու հիմքով: Մասնավորապես, քննիչը նշել է, որ դիմումատուների կողմից պահանջված առերեսումները չեն կարող իրականացվել վարույթի այդ փուլում, քանի որ՝ ա) կայացվել է որոշում Ա.Ս.-ին ձերբակալելու մասին, եւ նրա գտնվելու վայրը շարունակում էր մնալ անհայտ, եւ բ) Հ.Պ.-ն,

օգտվելով իր՝ որպես մեղադրյալի իրավունքներից, հրաժարվել է մասնակցել դիմումատուների հետ առերեսմանը:

30. 2011 թվականի հունիսի 22-ին քրեական գործը դատական քննության համար ուղարկվել է Մարզային դատարան:

31. Չպարզված օրը Հ.Պ.-ն հարցաքննվել է Մարզային դատարանում, սակայն նա հիմնականում տվել է մինչդատական վարույթի ընթացքում տված իր ցուցմունքներին հակասող ցուցմունքներ:

32. 2011 թվականի հուլիսի 13-ին Հ.Հ.-ն գրել է Մարզային դատարանին՝ խնդրելով հաշվի առնել մինչդատական վարույթի ընթացքում տված իր ցուցմունքները, քանի որ առողջական պատճառներով նա գտնվում էր այլ քաղաքում եւ չէր ցանկանում մասնակցել դատական քննությանը, քանի որ այդ դեպքերը նրան հոգեբանական տառապանք էին պատճառել:

33. Դատական քննության ընթացքում Մարզային դատարանը փորձել է ապահովել Հ.Հ.-ի եւ Հ.-ի, ինչպես նաեւ վկաներ Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի եւ Ս.Կ.-ի մասնակցությունը:

34. Մասնավորապես, 2011 թվականի հուլիսի 20-ին Մարզային դատարանը կայացրել է Հ.Հ.-ին դատարան բերման ենթարկելու մասին որոշումներ: Ի պատասխան դրանց՝ 2011 թվականի հուլիսի 28-ին Գավառի ոստիկանությունը տեղեկացրել է Մարզային դատարանին, որ Հ.Հ.-ն քաղաքում չէ: Ոստիկանության համապատասխան արձանագրությունների համաձայն՝ Հ.Հ.-ի կինը հայտնել է ոստիկանությանը, որ Հ.Հ.-ն եւ Հ.-ն առողջական պատճառներով գտնվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, եւ տվել է Երեւանի հասցե՝ նշելով, որ Հ.Հ.-ն եւ Հ.-ն բնակվել են այդտեղ: Այնուամենայնիվ, 2011 թվականի հուլիսի 28-ին Երեւանի ոստիկանությունը տեղեկացրել է Մարզային դատարանին, որ Հ.Հ.-ն նշված հասցեում չէ: Բնակարանի սեփականատերը նրանց հայտնել է, որ Հ.Հ.-ն եւ Հ.-ն մոտավորապես 8 ամիս վարձակալել են բնակարանը:

Այնուամենայնիվ, նրանք հեռացել էին, եւ նա որեւէ տեղեկություն չունէր նրանց գտնվելու վայրի մասին:

35. 2011 թվականի օգոստոսի 4-ին Մարզային դատարանը նոր որոշումներ է կայացրել վկաներ Ա.Ս.-ին, Մ.Մ.-ին, Ս.Գ.-ին եւ Ս.Կ.-ին դատարան բերման ենթարկելու մասին: 2011 թվականի օգոստոսի 10-ին Գավառի ոստիկանությունը Մարզային դատարանին տեղեկացրել է, որ Ա.Ս.-ն, Մ.Մ.-ն, Ս.Գ.-ն քաղաքում չեն, եւ որ իրենք տեղյակ չեն նրանց բնակության վայրի մասին: Մասնավորապես պարզվել էր, որ Ա.Ս.-ն, Մ.Մ.-ն, Ս.Գ.-ն հեռացել են երկրից: Նույն օրը Երեւանի ոստիկանությունը տեղեկացրել է Մարզային դատարանին, որ Ս.Կ.-ն բացակայում է իր մշտական բնակության վայրից, քանի որ հավանաբար նա աշխատում էր այլ քաղաքում:

36. 2011 թվականի օգոստոսի 17-ին Մարզային դատարանը նորից որոշումներ է կայացրել, ի թիվս այլ անձանց, Հ.Հ.-ին, Մ.Մ.-ին, Ս.Գ.-ին եւ Ս.Կ.-ին դատարան բերման ենթարկելու մասին: 2011 թվականի օգոստոսի 24-ին Գավառի ոստիկանությունը հասցեագրել է նույնանման պատասխան՝ Հ.Հ.-ի, Մ.Մ.-ի եւ Ս.Գ.-ի գտնվելու վայրի վերաբերյալ: Մասնավորապես, Մ.Մ.-ն, ըստ երեւոյթին, գտնվում էր Ռուսաստանում, իսկ Ս.Գ.-ն մեկնել էր Եգիպտոս: Մինչդեռ Ս.Կ.-ն Մարզային դատարանին ուղղված հեռագրի միջոցով խնդրել էր, որ դատարանը հաշվի առնի մինչդատական վարույթի ընթացքում տված իր ցուցմունքները: 2011 թվականի օգոստոսի 26-ին Երեւանի ոստիկանությունը տեղեկացրել է դատարանին, որ նա Երեւանում չէ:

37. 2011 թվականի օգոստոսի 24-ին դիմումատուները Մարզային դատարանին խնդրել են հաշվի չառնել վկաներ Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի եւ Ս.Կ.-ի՝ մինչդատական վարույթի ընթացքում տված ցուցմունքները, սակայն նրանց չհանել այն վկաների ցանկից, որոնք պետք է լսվեին դատական քննության ժամանակ:

38. 2011 թվականի սեպտեմբերի 14-ին Մարզային դատարանը նորից կայացրել է Հ.Հ.-ին դատարան բերման ենթարկելու մասին որոշում: 2011 թվականի սեպտեմբերի 22-ին Գավառի ոստիկանությունը տեղեկացրել է դատարանին, որ ոստիկանության ծառայողների կողմից Հ.Հ.-ի բնակության վայր ամենօրյա այցելություններն արդյունք չեն տվել, եւ որ հավանաբար նա այնտեղ չի եղել մոտ մեկ տարի:

39. 2012 թվականի փետրվարի 23-ին Մարզային դատարանը դիմումատուներին եւ Հ.Պ.-ին դատապարտել է ըստ մեղադրանքի եւ նրանց նկատմամբ նշանակել համապատասխանաբար տասներեք եւ տասներկու տարի ժամկետով ազատազրկում: Այդպիսով, Մարզային դատարանը, ի թիվս այլ ապացույցների, հղում է կատարել Հ.Հ.-ի եւ վկաներ Ա.Ա.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի եւ Ս.Կ.-ի՝ մինչդատական վարույթի ընթացքում տված ցուցմունքներին, որոնցից ոչ մեկը չի ներկայացել դիմումատուների գործով դատական քննությանը: Մարզային դատարանը նաեւ, *inter alia*, հղում է կատարել մինչդատական վարույթի եւ դատական քննության փուլերում ձեռք բերված՝ ավելի քան քսան վկաների ցուցմունքներին, որպես նախաքննության մաս իրականացված առերեսումների արձանագրություններին, դատաբժշկական փորձաքննության եզրակացությանը, դատաձգաբանական եւ մատնադրոշմային համալիր փորձաքննության եզրակացությանը, դատաձգաբանական եւ դատաքիմիական համալիր փորձաքննության եզրակացությանը, քննչական փորձարարության արձանագրությանը, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արձանագրություններին, Հ.Հ.-ի եւ Երկրորդ դիմումատուի ավտոմեքենաների զննության արձանագրությանը, դեպքի վայրի զննության արձանագրությանը, Երկրորդ դիմումատուի ավտոմեքենայի պետհամարանիշը ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությանը, մի քանի հեռախոսահամարների մուտքային եւ ելքային զանգերի վերծանումներին եւ մանրաթելերի քրեագիտական համալիր փորձաքննության եզրակացությանը:

40. Դիմումատուները ներկայացրել են վերաքննիչ բողոքներ, *inter alia*, բողոքելով, որ Հ.Հ.-ի եւ վկաներ Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ա.Գ.-ի եւ Ա.Կ.-ի՝ մինչդատական վարույթի ընթացքում տված ցուցմունքներն ընդունվել են որպես իրենց դեմ ներկայացված ապացույցներ, թեեւ նրանք նույնիսկ չեն ներկայացել վարույթին:

41. 2012 թվականի հուլիսի 20-ին Վերաքննիչ քրեական դատարանն ամբողջությամբ անփոփոխ է թողել Մարզային դատարանի դատավճիռը:

42. Դիմումատուները ներկայացրել են վճռաբեկ բողոք՝ բերելով իրենց նախորդ բողոքումներում ներկայացված համանման փաստարկներ:

43. 2012 թվականի սեպտեմբերի 7-ին Վճռաբեկ դատարանը դիմումատուների վճռաբեկ բողոքը ճանաչել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

44. Սույն գործի համատեքստում վերաբերելի են Քրեական դատավարության օրենսգրքի հետեւյալ դրույթները.

Հոդված 86. Վկան

«3. Վկան պարտավոր է՝ ... ցուցմունքներ տալու, քննչական եւ այլ դատավարական գործողությունների կատարմանը մասնակցելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ...

4. Վկայի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն»:

Հոդված 153. Բերման ենթարկելը

«1. Բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի քննության չներկայացող ... վկային ... [դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա] [քրեական վարույթն իրականացնող մարմին] ներկայացնելն է: ... Նշանակված ժամկետում կանչով

ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին ... վկան ... պարտավոր են տեղյակ պահել իրենց կանչած մարմնին»:

Հոդված 216. Առերեսում

«1. Քննիչն իրավունք ունի կատարելու նախօրոք հարցաքննված երկու այն անձանց առերեսում, որոնց ցուցմունքներում էական հակասություններ կան: Քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի եւ մեկ այլ անձի ցուցմունքներում:

...

3. Առերեսման կանչված անձանց առաջարկվում է հերթով ցուցմունքներ տալ այն հանգամանքների վերաբերյալ, որոնք պարզելու համար կատարվում է առերեսումը: Դրանից հետո քննիչը հարցեր է տալիս: Առերեսման կանչված անձինք քննիչի թույլտվությամբ կարող են հարցեր տալ միմյանց:

...

5. Առերեսմանը, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում, կարող են մասնակցել պաշտպանը, թարգմանիչը եւ հարցաքննվողի օրինական ներկայացուցիչը, որոնք նույնպես ստորագրում են արձանագրությունը»:

Հոդված 332. Չներկայացած վկայի, փորձագետի, մասնագետի բացակայությամբ գործի քննության հնարավորության մասին հարցի լուծումը

«1. Դատական քննությանը հրավիրված վկաներից որեւէ մեկի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է կայացնում գործի քննությունը շարունակելու կամ հետաձգելու մասին: Դատական քննությունը կարող է շարունակվել, եթե նշված անձանցից որեւէ մեկի չներկայանալը չի խոչընդոտի գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտմանը»:

Հոդված 342. Վկայի ցուցմունքների հրապարակումը

«1. Հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը, ինչպես նաեւ նրա ցուցմունքների ձայնագրառման վերարտադրումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, երբ

վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, էական հակասություններ կան այդ ցուցմունքների եւ դատարանում վկայի տված ցուցմունքների միջեւ, ինչպես նաեւ սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում»:

Հոդված 426.1. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը

«1. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

2. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը»:

Հոդված 426.4. Գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետեւանքով

«1. Նոր հանգամանքների հետեւանքով դատական ակտերը վերանայվում են [եթե] ... Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը...»:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԻ «Դ» ԵՆԹԱԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

45. Դիմումատուն, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի հետ համակցությամբ, բողոքել է, որ

դատական քննության ժամանակ իրենց չի տրվել տուժող Հ.Հ.-ին եւ վկաներ Ա.Ս.-ին, Մ.Մ.-ին, Ս.Գ.-ին եւ Ս.Կ.-ին խաչաձեւ հարցաքննելու հնարավորություն:

46. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը եւ 3-րդ կետի «դ» ենթակետն ունեն հետեւյալ բովանդակությունը.

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են... իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի ... տրիբունալի կողմիցարդարացի ... լսումների իրավունք:

...

3. Քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետեւյալ նվազագույն իրավունքները.

...

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, եւ իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու եւ հարցաքննելու միեւնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

...»:

Ա. Ընդունելիությունը

47. Դատարանը նշում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Դիմումատուները

48. Դիմումատուները պնդել են, որ չեն եղել հիմնավոր պատճառներ՝ տուժող Հ.Հ.-ի եւ վկաներ Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի եւ Ս.Կ.-ի՝ մինչդատական վարույթի ընթացքում տրված ցուցմունքները որպես ապացույց ընդունելու համար՝ դրանք դատական քննության ժամանակ ուսումնասիրելու փոխարեն: Մարզային դատարանը որեւէ ջանք չի գործադրել ապահովելու տուժող Հ.Հ.-ի ներկայանալը, ով դիմումատուների համար համարվում էր առանցքային նշանակություն ունեցող վկա: Բոլորին հայտնի էր, որ Հ.Հ.-ն Հայաստանում էր, եւ նրա հոգեբանական վիճակը դատական քննությանը չներկայանալու պատճառ չէր: Ինչ վերաբերում է Ա.Ս.-ին, Մ.Մ.-ին, Ս.Գ.-ին եւ Ս.Կ.-ին, ապա նրանք կանչվել էին դատարան, սակայն չէին ներկայացել, քանի որ մեկնել էին Հայաստանից: Այս վկաների գտնվելու վայրի կապակցությամբ Մարզային դատարանը հղում է կատարել բարեկամների եւ հարեւանների հայտարարություններին, սակայն որեւէ ջանք չի գործադրել ստուգելու դրանց ճշմարտացիությունը: Վկաները կարելու ազդեցություն են ունեցել դիմումատուների գործի վրա, եւ հետեւաբար դատարանը պետք է ջանքեր գործադրեր դիմումատուների կողմից նրանց հարցաքննելու հնարավորությունն ապահովելու համար:

49. Հ.Հ.-ի, Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի եւ Ս.Կ.-ի՝ մինչդատական վարույթի ընթացքում տված ցուցմունքները եղել են դիմումատուներին դատապարտելու համար օգտագործված միակ եւ վճռորոշ ապացույցները: Դատավճիռներում նշվել է, որ դիմումատուների մեղքն ապացուցվել է մինչդատական վարույթի փուլի այդ ցուցմունքներով: Հ.Հ.-ն եղել է այս գործով միակ ականատեսը: Հ.Հ.-ի եւ դիմումատուների միջեւ մինչդատական վարույթի ընթացքում իրականացված

առերեսումը չէր կարող համարվել որպես դիմումատուների կողմից նրան հարցաքննելու պատշաճ հնարավորություն: Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում:

բ) Կառավարությունը

50. Կառավարությունը պնդել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում տեղի չի ունեցել: Մարզային դատարանը հաշվի է առել վարույթի ընթացքում ձեռք բերված մի շարք ապացույցներ, այդ թվում՝ տուժող Հ.Հ.-ի եւ վկաներ Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի եւ Ս.Կ.-ի՝ մինչդատական վարույթի ընթացքում տված ցուցմունքները: 2011 թվականի մայիսի 18-ին դիմումատուների եւ Հ.Հ.-ի միջեւ տեղի են ունեցել առերեսումներ, որոնց ընթացքում դիմումատուները պատշաճ հնարավորություն են ունեցել վիճարկելու նրա ցուցմունքները: Մարզային դատարանը ջանքեր է գործադրել համապատասխան վկաների ներկայանալն ապահովելու համար, սակայն արդյունքի չի հասել: Դատարանն ընդունել է առնվազն չորս որոշում՝ նրանց դատարան բերման ենթարկելու մասին, եւ նրանց մասնակցությունն ապահովելու համար դատական նիստերը հետաձգվել են: Քանի որ դատարանը գործադրել է բոլոր ողջամիտ ջանքերը՝ ապահովելու համար նրանց ներկայությունը (թեեւ ապարդյուն), մինչդատական վարույթի ընթացքում նրանց կողմից տրված ցուցմունքներն ընդունելը եղել է հիմնավորված:

51. Ավելին, Կառավարությունը պնդել է, որ Հ.Հ.-ի, Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի եւ Ս.Կ.-ի չճշտված ցուցմունքները չեն հանդիսացել միակ եւ վճռորոշ ապացույցը՝ կապված դիմումատուի դատապարտման հետ, քանի որ Մարզային դատարանը հաշվի է առել մի շարք այլ ապացույցներ: Դիմումատուների մեղքը կհաստատվեր նույնիսկ Հ.Հ.-ի, Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի եւ Ս.Կ.-ի ցուցմունքների բացակայության դեպքում: Օրինակ՝ Մարզային դատարանը հղում է կատարել Հ.Պ.-ի մեղադրական մի քանի ցուցմունքներին, որոնցով հաստատվել է դիմումատուների մեղքը:

52. Կառավարությունը պնդել է, որ նախաքննության փուլում դիմումատուներին հնարավորություն է տրվել հարցաքննելու իրենց դեմ ցուցմունք տված անձանց, ինչը կարելու էր հակակշռող գործոն է եղել: Ավելին, ներպետական օրենսդրության համաձայն, քննիչը պետք է իրականացնի առերեսում, եթե մեղադրյալի եւ այլ անձանց ցուցմունքների միջեւ էական հակասություններ լինեին: Դիմումատուները զրկված չեն եղել նշված վկաների հետ առերեսման համար քննիչին կամ դատախազին միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից: Դիմումատուները նման միջնորդություն ներկայացրել են միայն նախաքննության վերջում եւ միայն Ա.Ս.-ի առնչությամբ, ով թաքնվել էր [վարույթից]: Դատական քննության ժամանակ եւս դիմումատուները չեն պահանջել առերեսում եւ նույնիսկ պահանջել են, որ Ա.Ս.-ին, Մ.Մ.-ին, Ս.Գ.-ին եւ Ս.Կ.-ին հանեն դատական քննությանը մասնակցելու համար կանչման ենթակա վկաների ցուցակից՝ նրանց տված ցուցմունքները ոչ արժանահավատ լինելու պատճառով:

53. Կառավարությունը եզրակացրել է, որ վարույթն ընդհանուր առմամբ եղել է արդար եւ մրցակցային, եւ պահպանվել է կողմերի հավասարության սկզբունքը: Դիմումատուները կարողացել են օգտվել իրենց բոլոր դատավարական իրավունքներից եւ՝ նախաքննության ընթացքում, եւ՝ դատական քննության փուլում:

2. Դատարանի գնահատականը

ա) Ընդհանուր սկզբունքները

54. Դատարանը կրկին նշում է, որ 6-րդ հոդվածի կիրառությունը կարգավորող հիմնական սկզբունքն արդարացիությունն է: Արդար դատաքննության իրավունքը ժողովրդավարական հասարակության մեջ այնքան կարելու է տեղ է զբաղեցնում, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով

սահմանված երաշխիքները նեղ իմաստով մեկնաբանելը որեւէ կերպ չի կարող արդարացվել (տե՛ս *Մորեյրա դե Ազեվեդոն ընդդեմ Պորտուգալիայի* [*Moreira de Azevedo v. Portugal*], 1990 թվականի հոկտեմբերի 23, § 66, շարք Ա, թիվ 189, եւ *Գրեգաչեւիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Gregačević v. Croatia*], թիվ 58331/09, § 49, 2012 թվականի հուլիսի 10):

55. Ավելին, Դատարանը վերահաստատում է, որ որպես ընդհանուր կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով եւ 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է, որ մեղադրյալին համարժեք եւ պատշաճ հնարավորություն տրվի վկայի՝ իր դեմ տված ցուցմունքի թույլատրելիությունը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ հետագա փուլերում (տե՛ս *Ալ-Խավաջան եւ Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ]* [*Al-Khawaja and Tahery v. the United Kingdom [GC]*], թիվ 26766/05 եւ 22228/06, § 118, ՄԻԵԴ 2011, եւ *Պոլետանը եւ Ազիրովիկն ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության* [*Poletan and Azirovik v. the former Yugoslav Republic of Macedonia*], թիվ 26711/07, 32786/10 եւ 34278/10, § 81, 2016 թվականի մայիսի 12):

56. *Ալ-Խավաջայի եւ Թահերիի* գործով (վերելում հիշատակված, §§ 119-147) Մեծ պալատը հստակեցրել է այն սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն այն դեպքում, երբ վկան դոնբաց դատական քննությանը չի ներկայանում: Այդ սկզբունքները կարող են ամփոփ ներկայացվել հետեւյալ կերպ.

i) Դատարանը նախ պետք է քննի այն նախնական հարցը, թե արդյոք հիմնավոր պատճառ կա չներկայացած վկայի տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար՝ հաշվի առնելով, որ վկաները պետք է, որպես ընդհանուր կանոն, ցուցմունք տան դատական քննության ժամանակ, եւ որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նրանց ներկայությունն ապահովելու համար.

ii) չներկայանալու ամենահաճախ հանդիպող պատճառներն են, օրինակ, ինչպես *Ալ-Խավաջայի եւ Թահերիի* գործում (վերելում հիշատակված), վկայի մահը կամ վախը վրեժխնդրությունից: Այնուամենայնիվ, վկան դատական քննությանը կարող է չներկայանալ նաեւ այլ իրավաչափ պատճառներով:

iii) Եթե վկան չի հարցաքննվել վարույթի ավելի վաղ փուլում, ապա վկայի ցուցմունքը դատական քննության ժամանակ տեղում տրվող ցուցմունքի փոխարեն թույլատրելի պետք է լինի ծայրահեղ միջոց:

iv) չներկայացած վկաների՝ նախկինում տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելը հնարավոր անբարենպաստ պայմաններ է ստեղծում մեղադրյալի համար, ով, ըստ էության, քրեական դատավարության ժամանակ պետք է ունենա իր դեմ ներկայացված ապացույցները վիճարկելու արդյունավետ հնարավորություն: Մասնավորապես, նա պետք է կարողանա ստուգել վկայի ցուցմունքների ճշմարտացիությունը եւ հավաստիությունը՝ վկաներին իր ներկայությամբ բանավոր հարցաքննելու միջոցով՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ վարույթի հետագա փուլերում:

v) «միակ կամ վճռորոշ ցուցմունքի սկզբունքի» համաձայն՝ այն դեպքում, երբ մեղադրյալը դատապարտվում է բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքների հիման վրա, որոնց մեղադրյալը չի կարող հարցաքննել վարույթի փուլերից որեւէ մեկում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն սահմանափակվում են:

vi) այս համատեքստում «վճռորոշ» բառը պետք է ընկալվի նեղ իմաստով՝ որպես այնպիսի նշանակության կամ կարելոթության ապացույց, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա դրա վճռորոշ լինելու հանգամանքը գնահատելը կախված է հիմնավորող ապացույցների ծանրակշիռ լինելուց. որքան ծանրակշիռ են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան ավելի քիչ հավանական է, որ չներկայացած վկայի ցուցմունքը համարվի վճռորոշ:

vii) այնուամենայնիվ, քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է մեկնաբանվի վարույթի արդարացիության ընդհանուր ուսումնասիրության համատեքստում, միակ կամ վճռորոշ [ապացույցի] սկզբունքը չպետք է կիրառվի ոչ ճկուն եղանակով.

viii) մասնավորապես, եթե ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույցն է մեղադրյալի դեմ, ապա այն որպես ապացույց ճանաչելը, ինքնըստինքյան, չի հանգեցնում 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Միեւնույն ժամանակ, եթե դատապարտման համար միակ կամ վճռորոշ հիմք են չներկայացած վկաների ցուցմունքները, ապա Դատարանը պետք է վարույթն առավել մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկի: Պայմանավորված այն վտանգներով, որոնք կարող են առաջանալ այդ ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու հետեւանքով, դրանք կարելու գործոն կհամարվեն հավասարակշռության համար եւ անհրաժեշտ կլինեն դրանց հակակշռող բավարար գործոններ, այդ թվում՝ հուսալի դատավարական երաշխիքներ: Ցանկացած դեպքում հարցն այն է, թե արդյոք առկա են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ կտան արդարացի եւ պատշաճ կերպով գնահատել այդ ցուցմունքների հավաստիությունը՝ դրանք որպես ապացույց ճանաչելու համար: Սա թույլ կտա, որ անձին դատապարտելը հիմնված լինի այդ ցուցմունքների վրա միայն այն դեպքում, եթե դրանք բավականաչափ հավաստի լինեն՝ հաշվի առնելով գործի համար դրանց կարելուրությունը:

57. Այս սկզբունքները մանրամասնորեն պարզաբանվել են *Շաչաշվիլին ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ] [*Schatschaschwili v. Germany* [GC]] գործում (թիվ 9154/10, §§ 111-131, ՄԻԵԴ 2015), որում Մեծ պալատը հաստատել է, որ վկայի չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չի կարող ինքնին վկայել դատաքննության անարդարացի լինելու մասին, թեեւ ընդհանուր արդարացիությունը գնահատելիս այն ամեն դեպքում կարելուր գործոն է հավասարակշռությունը որոշելու համար եւ կարող է որոշիչ դեր ունենալ 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում արձանագրելու

հարցում: Ավելին, հաշվի առնելով, որ Դատարանի խնդիրն էր պարզել՝ արդյոք դատական քննությունն ընդհանուր առմամբ արդարացի է եղել, այն պետք է բավարար հակակշռող գործոնների առկայությունն ուսումնասիրի ոչ միայն այն գործերում, որոնց դեպքում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է եղել դիմումատուին դատապարտելու համար, այլ նաեւ այն գործերում, որոնց դեպքում այն չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք տվյալ ցուցմունքը միակն ու վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այն կարելու է նշանակություն է ունեցել, եւ այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները:

Հակակշռող գործոնների՝ դատաքննությունն արդար համարելու համար անհրաժեշտ շրջանակը կախված է չներկայացած վկայի ցուցմունքի նշանակությունից: Որքան կարելու է նշանակություն ունենա այդ ցուցմունքը, այնքան ավելի կարելու է նշանակություն պետք է ունենան հակակշռող գործոնները, որպեսզի դատաքննությունն ընդհանուր առմամբ համարվի արդարացի (տե՛ս *Սեթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Seton v. the United Kingdom*], թիվ 55287/10, §§ 58 եւ 59, 2016 թվականի մարտի 31):

58. Քանի որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները պետք է դիտարկվեն որպես 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի հատուկ ասպեկտներ, Դատարանն այս դեպքում 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի մասով ներկայացված բողոքները կքննի համատեղ (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Վան Մեխելենը եւ այլք ընդդեմ Նիդեռլանդների* [*Van Mechelen and Others v. the Netherlands*], 1997 թվականի ապրիլի 23, § 49, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ* 1997-III, եւ *Գրեգաշելիչի* գործը՝ վերելում հիշատակված, § 52):

բ) Այդ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

59. Դատարանը նշում է, որ Մարզային դատարանը դիմումատուներին մեղավոր է ճանաչել մի խումբ անձանց հետ երկու կամ ավելի անձանց սպանության փորձ կատարելու եւ ապօրինի կերպով զենք կրելու մեջ եւ դատապարտել է նրանց համապատասխանաբար տասներեք եւ տասներկու տարի ժամկետով ազատազրկման: Մինչդատական վարույթի ընթացքում իրականացված միակ առերեսումը եղել է Հ.Հ.-ի՝ որպես վկայի, եւ դիմումատուների միջեւ: Դիմումատուները խնդրել են, որ Հ.Հ.-ն եւ վկաներ Ա.Ս.-ն, Մ.Մ.-ն, Ս.Գ.-ն եւ Ս.Կ.-ն հարցաքննության համար կանչվեն եւ բերման ենթարկվեն առաջին աստիճանի դատարան, սակայն նրանցից ոչ մեկը չի ներկայացել:

60. Ինչ վերաբերում է չներկայացած վկաների գրավոր ցուցմունքները որպես ապացույց օգտագործելուն, ապա Դատարանը բազմիցս նշել է, որ արդար դատաքննության պահանջներից մեկն այն է, որ մեղադրյալին տրվի այն դատավորի ներկայությամբ վկայի՝ իր դեմ տված ցուցմունքի թույլատրելիությունը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու հնարավորություն, որը վերջնական որոշում է կայացնելու գործի վերաբերյալ, քանի որ դատավորի դիտարկումները տվյալ վկայի վարքագծի վերաբերյալ եւ այն մասին, թե որքանով կարելի է վստահել նրան, կարող են հետեւանքներ ունենալ մեղադրյալի համար (տե՛ս Հանուն ընդդեմ Ռումինիայի [*Hanu v. Romania*], թիվ 10890/04, § 40, 2013 թվականի հունիսի 4, հաջորդող հղումների հետ միասին):

i) Արդյոք վկաների չներկայանալու համար եղել են հիմնավոր պատճառներ

61. Դատարանը վերահաստատում է, որ առաջին աստիճանի դատարանի տեսանկյունից՝ վկայի չներկայանալու համար պետք է առկա լինի հիմնավոր պատճառ, այսինքն՝ դատարանը պետք է ունենա հիմնավոր փաստական եւ իրավական հիմքեր՝ դատական քննությանը վկայի ներկայությունն ապահովել

չկարողանալու համար: Եթե վկայի չներկայանալու համար այդ իմաստով առկա են հիմնավոր պատճառներ, ապա դա նշանակում է, որ կան հիմնավոր պատճառներ կամ հիմնավորումներ՝ չներկայացած վկայի չստուգված ցուցմունքներն առաջին ատյանի դատարանի կողմից որպես ապացույց ընդունվելու համար (տե՛ս *Շաչաշվիլի* գործը՝ վերելում հիշատակված, § 119): Կան մի շարք պատճառներ, թե ինչու վկան չի կարող մասնակցել դատական քննությանը (տե՛ս *Ալ-Խավաջայի եւ Թահերիի* գործը՝ վերելում հիշատակված, §§ 120-125), ներառյալ այն իրավիճակները, երբ վկային հնարավոր չէ հայտնաբերել (տե՛ս *Յեբերն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [*Tseber v. the Czech Republic*], թիվ 46203/08, § 48, 2012 թվականի նոյեմբերի 22, եւ *Պաիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Paić v. Croatia*], թիվ 47082/12, § 34, 2016 թվականի մարտի 29):

62. Հ.Հ.-ի, Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի եւ Ս.Կ.-ի՝ դատական քննությանը չներկայանալու պատճառը եղել է այն, որ հնարավոր չի եղել գտնել նրանց: Հավանաբար Հ.Հ.-ն եւ Ս.Կ.-ն դեռեւս գտնվում էին Հայաստանում, սակայն Ա.Ս.-ն, Մ.Մ.-ն եւ Ս.Գ.-ն մեկնել էին երկրից (տե՛ս վերելում՝ 34-36-րդ պարբերությունները): Դատարանը նշում է, որ թեւեւ առաջին ատյանի դատարանը մի քանի անգամ փորձել է ապահովել նրանց մասնակցությունը, նրան չի հաջողվել դա անել: Առաջին ատյանի դատարանը չի ձեռնարկել լրացուցիչ այլ միջոցներ Հ.Հ.-ին եւ Ս.Կ.-ին Հայաստանի տարածքում գտնելու համար, ինչպես նաեւ չի դիմել, օրինակ՝ միջազգային իրավական օգնության՝ Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի եւ Ս.Գ.-ի գտնվելու վայրը պարզելու համար, ովքեր, ըստ երեւույթին, գտնվում էին երկրից դուրս:

63. Նույնիսկ եթե ենթադրվի, որ դատական նիստի ժամանակ այս անձանց չհարցաքննելու համար չեն եղել հիմնավոր պատճառներ, հիմնավոր պատճառի բացակայությունը դեռեւս ոչինչ չի նշանակում: Թեւեւ դա շատ կարեւոր գործոն է մյուս համապատասխան պնդումների հետ ընդհանուր հավասարակշռության մեջ դիտարկելու հարցում, այնուամենայնիվ, այն մի դիտարկում է, որն ինքնին չի

կարող վկայել քրեական վարույթի արդարացիության բացակայության մասին (տե՛ս *Սեթունի* գործը՝ վերելում հիշատակված, § 62):

ii) Արդյոք չներկայացած վկայի ցուցմունքը եղել է «միակն ու վճռորոշը»

64. *Ալ-Խավաշայի եւ Թահերիի* գործով ստուգման երկրորդ փուլը գնահատումն է, թե արդյոք չներկայացած այն վկայի ցուցմունքը, որի ցուցմունքները որպես ապացույց են ճանաչվել, եղել է մեղադրյալի դատապարտման միակ կամ վճռորոշ հիմքը: Կառավարությունը պնդել է, որ չներկայացած վկաների ցուցմունքները չեն եղել դիմումատուների դատապարտումը հիմնավորող միակ եւ վճռորոշ հիմքերը, մինչդեռ դիմումատուները պնդել են, որ նրանց ցուցմունքները եղել են իրենց մեղքն ապացուցող միակ ապացույցները: Ավելին, ըստ դիմումատուների, Հ.Հ.-ն եղել է այս գործով միակ ականատեսը:

65. Այս կապակցությամբ Դատարանը նկատում է, որ Մարզային դատարանի դատավճռով, որը հետագայում Վերաքննիչ քրեական դատարանի կողմից ամբողջությամբ թողնվել է անփոփոխ, Հ.Հ.-ի, Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի եւ Ս.Կ.-ի ցուցմունքներից բացի, հղում է կատարվել նաեւ այլ ապացույցների: Դատավճռից պարզ է դառնում, որ Մարզային դատարանը նաեւ հաշվի է առել մինչդատական վարույթի եւ դատական քննության փուլերում ձեռք բերված՝ ավելի քան քսան վկաների ցուցմունքները, որպես նախաքննության մաս իրականացված առերեսումների արձանագրությունները, դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, դատաձգաբանական եւ մատնադրոշմային համալիր փորձաքննության եզրակացությունը, դատաձգաբանական եւ դատաքիմիական համալիր փորձաքննության եզրակացությունը, քննչական փորձարարության արձանագրությունը, օպերատիվ- հետախուզական միջոցառումների արձանագրությունները, Հ.Հ.-ի եւ երկրորդ դիմումատուի ավտոմեքենաների զննության արձանագրությունը, դեպքի վայրի զննության արձանագրությունը,

երկրորդ դիմումատուի ավտոմեքենայի պետհամարանիշը ճանաչման ներկայացնելու մասին արձանագրությունը, մի քանի հեռախոսահամարների մուտքային եւ ելքային զանգերի վերձանումները եւ մանրաթելերի քրեագիտական համալիր փորձաքննության եզրակացությունը (տե՛ս վերելում՝ 39-րդ պարբերությունը):

66. Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ Հ.Հ.-ի, Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի եւ Ս.Կ.-ի ցուցմունքները հիմնարար կերպով վերաբերելի էին գործին: Այս ապացույցների հիման վրա՝ ներպետական դատարանները պետք է որոշեին, թե արդյոք դիմումատուները մեղավոր էին սպանության փորձ կատարելու եւ ապօրինի կերպով զենք կրելու մեջ, թե՛ ոչ: Եթե նույնիսկ այս ապացույցը սույն գործով միակ ապացույցը չլիներ, այն առնվազն վճռորոշ դեր ուներ դիմումատուների ներգրավվածության հարցում: Դա այդպես է, հատկապես, որ դատարաններին հասանելի մյուս ապացույցները համոզիչ չեն եղել: Ավելին, ինչ վերաբերում է այդ ապացույցներին, ապա Մարզային դատարանը պարտավոր էր դիմումատուներին հնարավորություն տալ պատշաճ կերպով իրականացնել իրենց պաշտպանությունը եւ առաջ քաշել իրենց բոլոր փաստարկները: Դրա փոխարեն դատարանն իր եզրակացություններում հիմնվել է այնպիսի վկաների ցուցմունքների վրա, որոնք երբեւէ չեն հարցաքննվել դատական նիստի ժամանակ (տես, ի հակադրություն, *Կաշլեւն ընդդեմ Էստոնիայի* [*Kashlev v. Estonia*], թիվ 22574/08, § 47, 2016 թվականի ապրիլի 26): Այս հանգամանքներում այն, որ Մարզային դատարանն անձամբ չի լսել վկաներ Հ.Հ.-ին, Ա.Ս.-ին, Մ.Մ.-ին, Ս.Գ.-ին եւ Ս.Կ.-ին, որոնց ցուցմունքները հետագայում օգտագործվել են դիմումատուների դեմ, կարողացել է էապես ազդել դիմումատուների պաշտպանվելու իրավունքի վրա:

iii) Արդյոք եղել են բավարար հակակշռող գործոններ

67. Դատարանը կրկին նշում է, որ այն պետք է բավարար հակակշռող գործոնների առկայությունն ուսումնասիրի ոչ միայն այն գործերում, որոնց դեպքում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է եղել դիմումատուին դատապարտելու համար, այլ նաեւ այն գործերում, որոնց դեպքում այն չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք տվյալ ցուցմունքը միակն ու վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ, համոզվել է, որ այդ ցուցմունքը կարելու է նշանակություն է ունեցել, եւ այն որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները (տե՛ս *Շաչաշվիլի* գործը՝ վերելում հիշատակված, §116, եւ *Սեթոնի* գործը՝ վերելում հիշատակված, § 59): *Շաչաշվիլի* գործում Մեծ պալատն այս համատեքստում որպես վերաբերելի առանձնացրել է հետեւյալ տարրերը՝ առաջին աստիճանի դատարանի մոտեցումը չստուգված ապացույցներին, մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների առկայությունն ու ուժը եւ դատական քննության ժամանակ վկաներին ուղղակիորեն խաչաձեւ հարցաքննելու հնարավորության բացակայությունը կոմպենսացնելու համար ձեռնարկված դատավարական միջոցները (տե՛ս *Շաչաշվիլի* գործը, §145, եւ *Պաիչի* գործը, §38՝ երկուսն էլ վերելում հիշատակված):

68. Դատարանը նկատում է, որ պաշտպանության կողմի համար առաջացած դժվարությունները կոմպենսացնելու համար եղել են որոշ դատավարական երաշխիքներ, ինչպես օրինակ՝ մինչդատական վարույթի ընթացքում տուժող Հ.Հ.-ի եւ դիմումատուների միջեւ առերեսումը: Այնուամենայնիվ, Դատարանի կարծիքով, դրանք բավարար չեն եղել կոմպենսացնելու այն հանգամանքը, որ դիմումատուները նույնիսկ հնարավորություն չեն ունեցել վիճարկելու նախաքննության փուլում վկաներ Ա.Ս.-ի, Մ.Մ.-ի, Ս.Գ.-ի եւ Ս.Կ.-ի կողմից տրված ցուցմունքները: Բոլոր դեպքերում բոլոր ապացույցները պետք է ստուգվեին դատարանում: Ավելին, Մարզային դատարանի դատավճռում ոչինչ չի մատնանշում, որ այն առանձնահատուկ

զգուշավորություն է դրսևորել չստուգված ապացույցների նկատմամբ, կամ որ այն ավելի քիչ նշանակություն է տվել նման ցուցմունքներին (համեմատել, օրինակ, *Ալ-Խավաշայի եւ Տահերի* գործը, § 157, եւ *Պաիշի* գործը, § 43՝ երկուսն էլ վերելում հիշատակված):

iv) Եզրակացություն

69. Վերոնշյալ պնդումները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ տվյալ գործում խախտվել է դիմումատուների արդար դատաքննության իրավունքը:

70. Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

71. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

72. Դիմումատուները պահանջել են համապատասխանաբար 24 000 եւ 18 000 եվրո՝ որպես նյութական վնասի հատուցում, եւ յուրաքանչյուրը 20 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

73. Կառավարությունը համարել է, որ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների ենթադրյալ խախտման եւ [դիմումատուի] կրած նյութական վնասի

միջեւ որեւէ պատճառահետեւանքային կապ առկա չէր: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, ապա Կառավարությունը համարել է, որ խախտում արձանագրելն ինքնին կլինի դիմումատուների կրած ոչ նյութական վնասի բավարար արդարացի փոխհատուցում: Ամեն դեպքում, պահանջվող գումարը չափազանց մեծ էր եւ պետք է նվազեցվեր:

74. Դատարանը որեւէ պատճառահետեւանքային կապ չի տեսնում հայտնաբերված խախտման եւ ենթադրյալ նյութական վնասի միջեւ, հետեւաբար այն մերժում է այս պահանջը: Մյուս կողմից, այն դիմումատուներին յուրաքանչյուրին շնորհում է 2400 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

75. Դատարանը նաեւ անհրաժեշտ է համարում նշել, որ վճիռը, որով այն Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում է արձանագրում, պատասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց վճարել արդարացի փոխհատուցման կարգով շնորհվող գումարները, եթե այդպիսիք կան, այլ նաեւ Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել ընդհանուր եւ (կամ) անհրաժեշտության դեպքում՝ անհատական միջոցներ, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ներպետական իրավական համակարգում՝ Դատարանի կողմից արձանագրված խախտմանը վերջ դնելու եւ դրա հետեւանքների համար այնպիսի իրատեսական հատուցում տրամադրելու համար, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ գոյություն ունեցած իրավիճակը (տե՛ս *Սկոզարին եւ Ջունտան ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Scozzari and Giunta v. Italy* [GC]], թիվ 39221/98 եւ 41963/98, § 249, ՄԻԵԴ 2000-VIII, *Իլաշկուն եւ այլք ընդդեմ Մոլդովայի եւ Ռուսաստանի* [ՄՊ] [*Ilaşcu and Others v. Moldova and Russia* [GC]], թիվ 48787/99, § 487, ՄԻԵԴ 2004-VII, եւ *Լունգոկին ընդդեմ Ռումինիայի* [*Lungoci v. Romania*], թիվ 62710/00, § 55, 2006 թվականի հունվարի 26): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրվելու դեպքում դիմումատուի համար պետք է հնարավորինս վերականգնվի այն իրավիճակը, որում նա կգտնվեր, եթե այդ դրույթի պահանջները չանտեսվեին

(տե՛ս *mutatis mutandis*, *Սեյդովիչն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Sejdovic v. Italy* [GC]], թիվ 56581/00, § 127, ՄԻԵԴ 2006-II, եւ *Յանակիեւն ընդդեմ Բուլղարիայի* [*Yanakiev v. Bulgaria*], թիվ 40476/98, § 89, 2006 թվականի օգոստոսի 10):

76. Դատարանն այս առնչությամբ նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 426.1-րդ եւ 426.4-րդ հոդվածներով նախատեսվում է ներպետական վարույթը վերսկսելու հնարավորություն, եթե Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում (տե՛ս վերելում՝ 44-րդ պարբերությունը): Ինչպես Դատարանն արձանագրել է սույն գործին նման նախորդ գործերում, հատուցման ամենապատշաճ ձեւը, որպես կանոն, կլինի գործը սահմանված կարգով վերսկսելն ու վերանայելը՝ արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ (տե՛ս *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* [*Gabrielyan v. Armenia*], թիվ 8088/05, § 104, 2012 թվականի ապրիլի 10, եւ *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* [*Avetisyan v. Armenia*], թիվ 13479/11, § 75, 2016 թվականի նոյեմբերի 10, եւ *Ասատրյանն ընդդեմ Հայաստանի* [*Asatryan v. Armenia*], թիվ 3571/09, §§ 73-74, 2017 թվականի ապրիլի 27):

Բ. Ծախսերը եւ ծախքերը

77. Դիմումատուն ծախսերի եւ ծախքերի մասով պահանջ չի ներկայացրել:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

78. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է գանգատն ընդունելի.
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում.
3. Վճռում է, որ՝
 - ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում ոչ նյութական վնասի դիմաց պետք է դիմումատուներից յուրաքանչյուրին վճարի 2 400 եվրո (երկու հազար չորս հարյուր եվրո), որը պետք է փոխարկվի պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.
 - բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարի նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.
4. Մերժում է դիմումատուների՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2018 թվականի դեկտեմբերի 6-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Աբել Կամպոս

Քսենյա Տուրկովիչ

Քարտուղար

Նախագահ